

**«Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից իրավաբանական անձանց (անհատ ձեռներեցներին)
բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ**

1. Ընդհանուր պայմաններ

- 1.1. «Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից իրավաբանական անձանց (անհատ ձեռներեցներին) բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) սահմանում են «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) և իրավաբանական անձի, այդ թվում՝ անհատ ձեռներեցի, (այսուհետ՝ Հաճախորդ, իսկ երկուսը միասին՝ Կողմեր) միջև Բանկի կողմից բանկային ծառայությունների մատուցման հետ կապված փոխհարաբերությունների և իրականացվող գործառնությունների հիմնական պայմանները:
- 1.2. Պայմանների սույն գլուխը կիրառելի է Բանկի ստորև նշված բանկային գործիքների համար, որոնց կարգավորումը նաև նախատեսված է Պայմանների համապատասխան գլխով և/կամ Բանկի կողմից տվյալ գործիքի համար սահմանված առանձին պայմաններով և կանոններով (այսուհետ՝ Առանձին ծառայության պայմաններ).
 - 1.2.1. Բանկային հաշիվ,
 - 1.2.2. Հեռահար սպասարկման համակարգեր,
 - 1.2.3. Վճարային քարտ,
 - 1.2.4. Պահատուփ:
- 1.3. Պայմանները հանդիսանում է հրապարակային առաջարկ (օֆերտա), որը համարվում է Հաճախորդի կողմից ընդունված (ակցեպտավորված).
 - 1.3.1. Բանկի սահմանած ձևանմուշով Հաճախորդի ստորագրած/վավերացրած համապատասխան հայտը (հայտ-պայմանագիրը) կամ հանձնարարականը Բանկ ներկայացվելու պահից, կամ
 - 1.3.2. համապատասխան դեպքերում՝ Պայմաններն ընդունելու մասին Հաճախորդի հաստատումը Բանկի համար ընդունելի և տվյալ ծառայության համար սահմանված եղանակով Բանկ ներկայացվելու պահից և/կամ տվյալ ծառայությունից օգտվելու համար Հաճախորդի կողմից համապատասխան գործողություն կատարելու միջոցով:
- 1.4. Բանկի որոշակի ծառայության համար Բանկի սահմանած ձևանմուշով փաստաթղթի՝ Հաճախորդի կողմից ստորագրումը/վավերացումը կամ համապատասխան դեպքերում՝ Հաճախորդի կողմից ծառայությունից օգտվելու գործողության կատարումը փաստում է Հաճախորդի կողմից Պայմանների, Առանձին ծառայության պայմանների, «Բանկի սակագների իրավաբանական անձ հաճախորդների համար» և Բանկի կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին սակագների (այսուհետ՝ երկուսը միասին Սակագներ) ընդունումը:
- 1.5. Պայմանների ներքո Կողմերի միջև իրավահարաբերությունները ծագում են/ուժի մեջ են Հաճախորդի ակցեպտը Բանկի կողմից ստանալու և ընդունելու պահից, որը և այդ պահից, Պայմանների, Առանձին ծառայության պայմանների և Սակագների հետ միասին, համարվում է Կողմերի միջև կնքված պայմանագիր:
- 1.6. Կողմերի միջև իրավահարաբերությունները Պայմանների ներքո, սակայն վերջինից տարբերվող դրույթների մասով կարող են կարգավորվել առանձին պայմանագիր կամ համաձայնագիր կնքելու միջոցով, որը Կողմերի համաձայնությամբ կարող է կատարվել ծառայության տրամադրման և սպասարկման ցանկացած փուլում:
- 1.7. Հաճախորդների առանձին խմբերի համար Բանկը կարող է սահմանել սպասարկման առանձին պայմաններ և կանոններ, որոնք գործում են ի լրումն Պայմանների, եթե դրանցում այլ բան նախատեսված չէ:

- 1.8. Այն դեպքում երբ Բանկի կողմից առանձին ծառայությունների մատուցման համար սահմանված են առանձին պայմաններ և (կամ) պայմանագրեր, դրանք գործում են ի լրումն Պայմանների:
- 1.9. Պայմանները գերակա են, և Պայմանների ներքո Բանկի կողմից հաստատված և հետագայում հաստատվող փաստաթղթերի տիպային ձևերը, Առանձին ծառայության պայմանները, Սակագները գործում են այնքանով, որքանով չեն հակասում Պայմաններին, եթե այդպիսի տիպային ձևերով, պայմաններով, սակագներով այլ բան նախատեսված չէ:
- 1.10. Պայմանները, Սակագները, Առանձին ծառայության պայմանները, այդ թվում՝ բանկային հաշիվների մնացորդների դիմաց հաշվարկվող տոկոսադրույքի չափը, ինչպես նաև Բանկի կողմից ծառայությունների մատուցման համար Հաճախորդից պահանջվող փաստաթղթերի ցանկը սահմանվում և կարող են միակողմանիորեն փոփոխվել Բանկի կողմից, հասանելի են Բանկի տարածքում և Բանկի ինտերնետային կայքում: Նշված փաստաթղթերի փոփոխությունները Բանկը Հաճախորդին ծանուցում է դրանց ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 10 (տասն) օր առաջ՝ Բանկի տարածքում, ինտերնետային կայքում դրանք հասանելի դարձնելու, նաև հրապարակելու միջոցով, իսկ Կողմերի միջև նախապես համաձայնեցված լինելու դեպքում՝ նաև Հաճախորդի համար նախընտրելի այլ եղանակով: Եթե մինչև փոփոխությունների ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը Հաճախորդը գրավոր չի տեղեկացնում Բանկին Պայմանների ներքո Կողմերի միջև իրավահարաբերությունները դադարեցնելու իր ցանկության մասին, այդ փոփոխությունները համարվում են ընդունված (ակցեպտավորված) Հաճախորդի կողմից:
- 1.11. Բանկի կողմից Հաճախորդին ծառայություններ կարող են մատուցվել ինչպես Հաճախորդի և Բանկի առերես հաղորդակցմամբ, այնպես էլ հեռահար եղանակով: Յուրաքանչյուր հեռահար սպասարկման համակարգի միջոցով հասանելի ծառայությունների/գործառնությունների և գործողությունների տեսակները սահմանվում են Պայմաններով և/կամ դրանց կատարումը տվյալ հեռահար սպասարկման համակարգում հասանելի դարձնելու միջոցով: Հաճախորդի հեռահար սպասարկման պայմանները և կանոնները սահմանվում են Պայմաններում, իսկ Պայմաններում չնկարագրված, այդ թվում՝ Բանկի կողմից հրապարակայնորեն հասանելի դարձրած հեռահար ծառայությունների պայմանները Բանկը սահմանում և հրապարակում է առանձին՝ այդ ծառայությունների համար նախատեսված համակարգում:
- 1.12. Բանկի մասնաճյուղերի և Կոնտակտ կենտրոնի կողմից Հաճախորդը սպասարկվում է գործառնական օրվա ընթացքում, որը Բանկը սահմանում է ինքնուրույն: Յուրաքանչյուր մասնաճյուղի և Կոնտակտ կենտրոնի գործառնական օրերի և ժամերի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում: Պայմանների իմաստով գործառնական օր է համարվում Հաճախորդի սպասարկման համար Բանկի մասնաճյուղերի և Կոնտակտ կենտրոնի համար սահմանված օրերն ու ժամերը, իսկ աշխատանքային օր է համարվում հնգօրյա աշխատանքային շաբաթվա ռեժիմում՝ ժամը 9:00-18:00:
- 1.13. Հաճախորդի համար Բանկում սահմանված կարգով հաստատվում են Հաճախորդի հաշվով գործարք կատարելու իրավունք ունեցող ներկայացուցչի (ներկայացուցիչների) ստորագրության (ստորագրությունների), կնիքի (առկայության դեպքում) նմուշ(ներ)ը, ինչպես նաև այդ ներկայացուցիչների շրջանակը սահմանող հրահանգ-հանձնարարական: Բանկը պահանջում է հրահանգ-հանձնարարականում նշված անձանց՝ որպես ներկայացուցիչ հանդես գալու օրինական հիմքը: Հրահանգ-հանձնարարականը, ստորագրության և կնիքի նմուշները հաստատվում են անժամկետ և գործում են մինչև Հաճախորդի կողմից վերացումը, եթե այլ ժամկետ սահմանված չէ հրահանգ-հանձնարարականում և (կամ) նմուշները հաստատող փաստաթղթերում: Հրահանգ-հանձնարարականում նշված ներկայացուցիչների զբաղեցրած պաշտոնների փոփոխությունը ինքնաբերաբար չի հանգեցնում այդ անձանց իրավասությունների փոփոխության:

- 1.14. Հաճախորդը վճարում է Բանկին վերջինիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց միջնորդավճարներ և սպահովում է հաշվի նվազագույն մնացորդ՝ Սակագներով նախատեսված դեպքերում և սահմանված չափերով:
- 1.15. Միջնորդավճարները գանձվում են ՀՀ դրամով, բացառությամբ ոչ ռեզիդենտ անձանցից գանձվող միջնորդավճարների, որոնք կարող են գանձվել նաև արտարժույթով: Արտարժույթով գումարի նկատմամբ տոկոսներով արտահայտված միջնորդավճարները գանձվում են ՀՀ դրամով՝ հիմք ընդունելով գանձման պահի դրությամբ Բանկի սահմանած տվյալ արտարժույթի առթի փոխարժեքը: Վճարային քարտերի սպասարկման ընթացքում ՀՀ դրամով արտահայտված սպասարկման վճարների մուտքագրումները և գանձումները իրականացվում են ՀՀ ԿԲ կողմից հայտարարված արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով:
- 1.16. Բանկում հաճախորդի հաշիվներին ՀՀ դրամով բավարար միջոցներ չլինելու դեպքում Բանկն իրավունք ունի միջնորդավճարի գումարը կամ դրա մի մասը գանձել Հաճախորդի արտարժույթային միջոցներից՝ փոխարկելով արտարժույթը ՀՀ դրամի՝ հիմք ընդունելով գանձման պահի դրությամբ Բանկի սահմանած տվյալ արտարժույթի առթի փոխարժեքը:
- 1.17. Բանկն իրավունք ունի առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան այլ բանկերին, վարկային կազմակերպություններին, վարկային բյուրոներին, ինչպես նաև Ավանդների հատուցման երաշխավորման հիմնադրամին՝ վերջիններիս պահանջով կամ իր նախաձեռնությամբ տրամադրել Հաճախորդի և նրա հաշիվների, ինչպես նաև վարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն:
- 1.18. Բանկն իրավունք ունի առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ ՀՀ հարկային մարմինն տրամադրել հարկային մարմնում հաշվառված հարկ վճարողների համար Բանկում հաշիվների բացման, ինչպես նաև փակման մասին տեղեկատվություն:
- 1.19. Բանկը կարող է օտարերկրյա օրենսդրության պահանջներին համապատասխան՝ օտարերկրյա օրենսդրության ներքո ընկնող Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել օտարերկրյա իրավասու մարմիններին:
- 1.20. Բանկը Հաճախորդի հետ հաղորդակցվում է, այդ թվում՝ ուղարկում է հաղորդագրություններ, Բանկի կողմից մատուցվող բանկային ծառայությունների հետ կապված փաստաթղթեր, նյութեր և պարագաներ՝ Հաճախորդի հետ համաձայնեցված եղանակով և հաղորդակցման տվյալներով:
- 1.21. Հաճախորդը թույլատրում է Բանկին օգտագործել Հաճախորդի կոնտակտային տվյալները (անվանումը, հասցեն և հաղորդակցման տվյալները), ինչպես նաև իր հայեցողությամբ և առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու Բանկի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող ընկերություններին տրամադրել այդ տվյալները՝ Բանկի կողմից ծառայությունների մատուցման, Հաճախորդին ծառայություններ առաջարկելու կամ մատուցվող ծառայությունները բարելավելու նպատակով:
- 1.22. Բանկն իրավունք ունի օգտագործել Հաճախորդի էլեկտրոնային փոստի հասցեն, բջջային հեռախոսահամարը և այլ հաղորդակցման տվյալները՝ Հաճախորդին Բանկի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվական, գովազդային բնույթի հաղորդագրություններ ուղարկելու նպատակով: Տեղեկատվական բնույթի հաղորդագրությունը ներառում է հաշիվների քաղվածքները, Բանկի ծառայությունների պայմանների, Կողմերի միջև հաղորդակցման կարգի, Կողմերի իրավունքների և պարտականությունների սահմանման, փոփոխման կամ դադարեցման, Բանկի ծառայությունների և տարեկան տոկոսային եկամտաբերության վրա ազդեցություն ունեցող օրենքների, նորմատիվ իրավական ակտերի, Բանկի ներքին իրավական ակտերի փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև Հաճախորդի պարտավորությունների, դրանց առաջացման հիմքերի, մարումների վերաբերյալ և պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ

կատարման համար Բանկի կողմից կիրառված (կիրառվող) պատասխանատվության միջոցների, դրանց կիրառման կարգի վերաբերյալ տեղեկատվությունը:

- 1.23. Փոստային կամ էլեկտրոնային կապի, ինչպես նաև բջջային հեռախոսակապի կարճ հաղորդագրության (SMS) միջոցով ծանուցման դեպքում Հաճախորդը համարվում է պատշաճ ծանուցված՝ վերջինիս հասցեագրված Բանկի հաղորդագրությունը Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված փոստային հասցեին, էլեկտրոնային փոստի հասցեին կամ բջջային հեռախոսահամարին Բանկի կողմից ուղարկվելու դեպքում:
- 1.24. Հաճախորդը պարտավորվում է անհապաղ տեղեկացնել Բանկին իր հասցեի, ռեզիդենտության կարգավիճակի, ինչպես նաև Բանկին ներկայացված տեղեկություններում և փաստաթղթերում ցանկացած այլ փոփոխությունների մասին: Հաճախորդի կողմից նման փոփոխությունների վերաբերյալ Բանկին տեղեկություններ չտրամադրելու դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում Բանկում առկա տեղեկությունների կամ փաստաթղթերի հիման վրա Հաճախորդի բանկային հաշվով կատարված գործառնությունների հետևանքով Հաճախորդի կրած վնասների համար:
- 1.25. Հաճախորդի և Բանկի միջև հեռախոսագրույցը, անվտանգության նկատառումները ելնելով, ձայնագրվում է, և այդ ձայնագրությունն ունի ապացուցողական նշանակություն և կարող է օգտագործվել Բանկի կողմից իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:
- 1.26. Հաճախորդը պատասխանատու է Բանկի կրած բոլոր այն ծախսերի, կորուստների և վնասների համար, որոնք առաջացել են Պայմաններով, Առանձին ծառայության պայմաններով սահմանված՝ Հաճախորդի պարտավորությունները վերջինիս կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով:
- 1.27. Բանկը պատասխանատվություն չի կրում որևէ անձի կողմից կրած ուղղակի կամ անուղղակի ծախսերի և վնասների համար (ներառյալ սպասվելիք եկամտի կամ տոկոսների կորուստը), եթե այդպիսիք ամբողջությամբ կամ մասամբ առաջացել են Բանկի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման հետ կապված գործողություններ կատարելու հետևանքով, ինչպես նաև ի կատարումն ՀՀ օրենսդրության այլ պահանջների:
- 1.28. Բանկը պատասխանատու չէ պետական մարմինների գործողությունների կամ անհաղթահարելի ուժի, այդ թվում՝ սարքավորումների անսարքության կամ էլեկտրաէներգիայի մատակարարման ընդհատումների կամ խափանման հետևանքով առաջացած Հաճախորդի վնասների, կորուստների կամ ուշացման դեպքերի համար:
- 1.29. Հաճախորդի անվճարունակության կամ սնանկացման, իսկ անհատ ձեռներեցների դեպքում՝ նաև Հաճախորդի մահվան, անգործունակության դեպքերում Բանկը պատասխանատվություն չի կրում բանկային գործառնությունների կամ ծառայությունների տրամադրման համար, քանի դեռ չի ստացել այդպիսի փաստերի մասին պատշաճ ծանուցում, այդ թվում՝ բավարար փաստաթղթային ապացույցներ: Պատշաճ ծանուցում ստանալու դեպքում այդ ծանուցման ստացմանը հաջորդող աշխատանքային օրվանից Բանկը կասեցնում է բանկային գործառնությունների և ծառայությունների տրամադրումը, մինչև իրավասու անձի կողմից գործառնություններ կատարելու համար պատշաճ լիազորությունների ձեռքբերումը և ձևակերպումը, ընդ որում՝ անհատ ձեռներեցի մահվան դեպքում՝ տուժանքների հաշվարկը կասեցվում է, իսկ տոկոսների հավելագրումը չի դադարում: Բանկն իրավունք ունի կասեցնել բանկային գործառնությունների և ծառայությունների տրամադրումը նաև այն դեպքում, եթե սույն կետում նշված փաստերի մասին տեղեկատվություն է ստացել այլ՝ Բանկի կողմից որպես հավաստի գնահատված աղբյուրից:
- 1.30. Ստորև նշված դեպքերում Բանկն իրավասու է մերժել (կասեցնել) Հաճախորդի կողմից գործարքի կատարումը/ Հաճախորդին ծառայության տրամադրումը, մերժել Հաճախորդի հետ իրավահարաբերությունների հաստատումը, դադարեցնել Հաճախորդի հետ ձևավորված իրավահարաբերությունները կամ

միակողմանիորեն՝ Բանկի կողմից հաստատված ներքին իրավական ակտերով սահմանված կարգով (այդ թվում՝ տվյալ պահին գործող Սակագներով) փակել Հաճախորդի հաշիվները կամ մինչև հաճախորդի կողմից համապատասխան փաստաթղթերի համալրումը կամ պահանջների կատարումը՝ ժամանակավորապես սահմանափակել այդ հաշիվներով գործառնությունները.

1.30.1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ օրենսդրության այլ պահանջներին համապատասխան,

1.30.2. Բանկի օրինական պահանջները Հաճախորդի կողմից չկատարելու, այդ թվում Բանկի նկատմամբ պարտավորությունները ժամանակին չվճարելու, Պայմանների խախտման, Բանկի կողմից պահանջվող տեղեկատվությունը կամ փաստաթղթերը չտրամադրելու կամ Բանկի կողմից սահմանված տիպային ձևից տարբերվող (նաև բովանդակության առումով) ցանկացած այլ ձևի փաստաթղթով ներկայացնելու դեպքում,

1.30.3. Պայմաններով, Սակագներով, Առանձին ծառայության պայմաններով նախատեսված դեպքերում:

Ընդ որում, Բանկի՝ սույն կետում նշված գործողությունների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.31. ՀՀ օրենսդրության պահանջների, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի, միջազգային իրավունքի նորմերի, միջազգային և օտարերկրյա պատժամիջոցների հիման վրա, Բանկի միակողմանի ստանձնած պարտավորությունների արդյունքում, Բանկի թղթակից բանկերի պահանջով կամ Բանկի իրավասու մարմնի որոշմամբ՝ Բանկը կարող է սահմանափակումներ կամ արգելքներ սահմանել և կիրառել որոշակի երկրի քաղաքացիություն (գրանցում) կամ ռեզիդենտություն ունեցող և/կամ առանձին խմբի դասվող անձանց նկատմամբ: Նման սահմանափակումների արդյունքում կարող են ինչպես արգելվել հաշիվների սպասարկումն ու Հաճախորդի հետ համագործակցությունն ընդհանրապես, այնպես էլ կարող են կիրառվել առանձին ծառայությունների գծով սահմանափակումներ (օրինակ՝ միջազգային վճարային քարտերի տրամադրման/սպասարկման արգելք, արտարժույթային հաշիվներով միջազգային փոխանցումների կատարման և/կամ ստացման արգելք):

1.32. Հաճախորդը կարող է միակողմանիորեն լուծել Բանկի հետ կնքված պայմանագիրը (այդ թվում՝ փակել Բանկում իր հաշիվները)՝ այդ մասին նախապես գրավոր ծանուցելով Բանկին և մարելով տվյալ պայմանագրի հետ կապված՝ Բանկի նկատմամբ ունեցած պարտավորություններն ամբողջությամբ:

1.33. Բանկը կարող է, առանց Հաճախորդին նախապես ծանուցելու կամ հիմնավորելու, կասեցնել կամ դադարեցնել բանկային ծառայությունների մատուցման հետ կապված գործառնությունները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի և պայմանների պահպանմամբ:

1.34. Պայմաններով չկարգավորված իրավահարաբերությունները կարգավորվում են Սակագներով, Առանձին ծառայության պայմաններով, Բանկի և Հաճախորդի միջև պայմանագրային հարաբերություններ սահմանող այլ փաստաթղթերով և ՀՀ օրենսդրությամբ, իսկ ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չլինելու դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներով:

1.35. Բանկի և Հաճախորդի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ Կողմերի միջև ծագած դատական վեճերը ընդդատյա են ՀՀ դատարանին:

1.36. Պայմանների հայերեն տարբերակը նախապատվություն ունի այլ լեզուներով տարբերակների նկատմամբ:

2. Բանկային հաշիվ

- 2.1. Պայմանները տարածվում են Բանկում՝ Հաճախորդի բոլոր բանկային հաշիվների վրա՝ անկախ արժույթից և տեսակից:
- 2.2. Բանկը Հաճախորդի համար բացում է հաշիվ՝ Բանկի սահմանած ձևանմուշով Հաճախորդի Բանկ ներկայացրած հայտի (հայտ-պայմանագրի) հիման վրա:
- 2.3. Ընթացիկ հաշիվը բացվում է ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով, ՌԴ ռուբլով, շվեյցարական ֆրանկով, անգլիական ֆունտ ստերլինգով, կանադական դոլարով, ճապոնական իենով, ավստրիական դոլարով, ԱՄԷ դիրհամով, անկանխիկ ոսկով (999.9 հարգի), ինչպես նաև Բանկի կողմից գնանշվող այլ արժույթով:
- 2.4. Հաճախորդի՝ Բանկում ունեցած հաշիվներին առկա միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքը չի կարող սահմանափակվել, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվում առկա միջոցների նկատմամբ սահմանափակում կիրառվելու (արգելադրվելու), հաշվով գործառնությունները դադարեցվելու դեպքում, ինչպես նաև պայմանագրային հարաբերություններ սահմանող փաստաթղթերով, ՀՀ օրենսդրությամբ և/կամ Պայմաններով նախատեսված այլ դեպքերում:
- 2.5. Հաճախորդի հաշվից միջոցների փոխանցման կարգը Բանկը սահմանում է ինքնուրույն, եթե այլ բան ուղղակիորեն սահմանված չէ ՀՀ օրենսդրությամբ: Եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ, Պայմաններով կամ Կողմերի համաձայնությամբ, Հաճախորդի հաշվին բավարար դրամական միջոցների առկայության դեպքում այդ միջոցները դուրս են գրվում հաշվից՝ Հաճախորդի հանձնարարականները Բանկ մուտք լինելու հաջորդականությամբ (օրացուցային հաջորդականություն), որն առանձնանում է՝ ըստ հանձնարարականների ստացման յուրաքանչյուր եղանակի (յուրաքանչյուր հեռահար սպասարկման համակարգի համար՝ առանձին, և Բանկի տարածքում՝ առանձին): Խմբային կամ միաժամանակ ներկայացված հանձնարարականների կատարման հաջորդականությունը Բանկը որոշում է ինքնուրույն, եթե առկա չէ Հաճախորդի ցուցումը՝ որևէ հանձնարարականի առաջնահերթ կատարման:
- 2.6. Բանկն ընդունում է Հաճախորդի կողմից ներկայացված վճարման հանձնարարականը Բանկի կողմից սահմանված գործառնական ժամերի ընթացքում:
- 2.7. Հաճախորդի հայտերով, այդ թվում՝ հեռահար կապի միջոցներով ստացված հայտերով՝ արտարժույթի, անկանխիկ ոսկու առքուվաճառքի գործառնությունները, անկախ հայտի ստացման պահից, իրականացվում են Բանկի կողմից գործարքի փաստացի կատարման պահի դրությամբ Բանկի սահմանած փոխարժեքներով և կարգով: Աշխատանքային ժամերից դուրս, ինչպես նաև ոչ աշխատանքային օրերին ստացված արտարժույթի փոխանակման, անկանխիկ ոսկու առքուվաճառքի հայտերը Բանկի կողմից կարող են մերժվել:
- 2.8. Հաճախորդի կողմից Բանկ ներկայացված վճարման հանձնարարականով փոխանցումը Բանկի կողմից կատարվում է
 - 2.8.1. ներբանկային փոխանցման դեպքում՝ հանձնարարականի ստացման գործառնական օրվա ընթացքում, եթե հանձնարարականում կատարման այլ օր նշված չէ,
 - 2.8.2. Բանկից դուրս փոխանցման դեպքում՝ հանձնարարականի ստացման աշխատանքային օրվա ընթացքում, եթե այն ստացվել է.
 - 2.8.2.1. ՀՀ դրամով վճարման հանձնարարականը՝ Բանկի տարածքում՝ մինչև ժամը 13:00, իսկ հեռահար սպասարկման եղանակով՝ մինչև ժամը 14:00,
 - 2.8.2.2. ԱՄՆ դոլարով վճարման հանձնարարականը՝ Բանկի տարածքում՝ մինչև ժամը 16:00, իսկ հեռահար սպասարկման եղանակով՝ մինչև ժամը 17:00,

2.8.2.3. այլ արտարժույթով կամ ոսկով վճարման հանձնարարականը՝ Բանկի տարածքում՝ մինչև ժամը 15:00, իսկ հեռահար սպասարկման եղանակով՝ մինչև 16:00:

Նշված ժամերից հետո ներկայացված վճարման հանձնարարականով Բանկից դուրս փոխանցումը կատարվում է հաջորդ աշխատանքային օրը, իսկ հանձնարարականի մշակման և Հաճախորդի հաշվից միջոցների դուրսգրման կարգը սահմանվում են Բանկի ներքին իրավական ակտերով:

Վճարման հանձնարարականը կարող է կատարվել սույն կետում նշված ժամկետներից տարբերվող ժամկետում՝ համաձայն Մակագների:

2.9. Վճարման հանձնարարականը Հաճախորդը պետք է Բանկ ներկայացնի հետևյալ լեզվով.

2.9.1. ՀՀ տարածքում լոկալ վճարահաշվարկային համակարգով կատարվող փոխանցումների դեպքում՝ հայերեն լեզվով՝ ըստ անհրաժեշտության նաև օտար լեզվով, կամ Կողմերի համար ընդունելի այլ տարբերակով,

2.9.2. միջազգային փոխանցումների դեպքում՝ անգլերեն լեզվով, բացառությամբ ՌԴ ռուբլով փոխանցումների, որոնց դեպքում՝ ներկայացվում է ռուսերեն լեզվով:

2.10. Վճարման հանձնարարականում նշված կատարման կամ վճարման օրվանից հետո հինգերորդ աշխատանքային օրվա ավարտի պահին Բանկի կողմից չակցեպատվորված վճարման հանձնարարականը չեղյալ է համարվում:

2.11. Բանկային հաշվին կանխիկ միջոցները մուտքագրվում են գումարի ներկայացման պահին, իսկ անկանխիկ միջոցները՝ թղթակից Բանկից հավաստիացնող փաստաթղթերի առկայության դեպքում:

2.12. Հաճախորդի կողմից ներկայացված հայտի հիման վրա Բանկը Հաճախորդին տրամադրում է կանխիկ միջոցներ՝ հետևյալ ժամկետներում և սահմանաչափերով.

2.12.1. Բանկի՝ Երևան քաղաքում գտնվող մասնաճյուղերում (բացառությամբ գլխամասային գրասենյակի) հայտի ներկայացման դեպքում կանխիկ գումարը տրամադրվում է հայտի ներկայացման գործառնական օրվա ընթացքում, եթե գումարը չի գերազանցում 20 մլն ՀՀ դրամ, 25,000 ԱՄՆ դոլար, 15,000 եվրո: Նշված սահմանաչափերը գերազանցելու դեպքում, կանխիկ գումարը տրամադրվում է հայտի ներկայացման հաջորդ աշխատանքային օրը, եթե հայտը ներկայացվել է մինչև ժամը 14:00, և 2 աշխատանքային օրվա ընթացքում, եթե հայտը ներկայացվել է ժամը 14:00-ից հետո:

2.12.2. Բանկի գլխամասային գրասենյակում հայտի ներկայացման դեպքում կանխիկ գումարը տրամադրվում է հայտի ներկայացման գործառնական օրվա ընթացքում, եթե գումարը չի գերազանցում 30 մլն ՀՀ դրամ, 100,000 ԱՄՆ դոլար, 30,000 եվրո, 1 մլն ՀՀ դրամին համարժեք արտարժույթ (մյուս արտարժույթների դեպքում): Նշված սահմանաչափերը գերազանցելու դեպքում կանխիկ գումարը տրամադրվում է հայտի ներկայացման հաջորդ աշխատանքային օրը, եթե հայտը ներկայացվել է մինչև ժամը 14:00, և 2 աշխատանքային օրվա ընթացքում, եթե հայտը ներկայացվել է ժամը 14:00-ից հետո:

2.12.3. Բանկի՝ Երևան քաղաքից դուրս գտնվող մասնաճյուղերում հայտի ներկայացման դեպքում կանխիկ գումարը տրամադրվում է հայտի ներկայացման գործառնական օրվա ընթացքում, եթե գումարը չի գերազանցում 10 մլն ՀՀ դրամ, 20,000 ԱՄՆ դոլար և 10,000 եվրո: Նշված սահմանաչափերը գերազանցելու դեպքում կանխիկ գումարը տրամադրվում է հայտը ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2.13. Առանձին տեսակի բանկային հաշիվների համար Բանկը Հաճախորդի ցանկությամբ, Հաճախորդին տրամադրում է չեկային գրքույկ: Հաճախորդը չեկ դուրս գրելիս պետք է հետևի Բանկի կողմից սահմանված կանոններին՝

- 2.13.1. Չեկը, որը դուրս է գրվել ՀՀ տարածքում, պետք է Բանկին վճարման ներկայացվի չեկի դուրսգրմանը հաջորդող օրվանից սկսած 10 (տասը) օրացուցային օրվա ընթացքում:
- 2.13.2. Չեկը, որը դուրս է գրվել ՀՀ տարածքից դուրս, պետք է Բանկին վճարման ներկայացվի չեկի դուրսգրմանը հաջորդող օրվանից սկսած 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում:
- 2.14. Բանկը կատարում է Հաճախորդի՝ հաշվով գործարք կատարելու հանձնարարականը, եթե Հաճախորդի հաշիվ(ներ)ին առկա է բավարար գումար գործարքն իրականացնելու համար, և այդ գումարը ծանրաբեռնված չէ այլ պարտավորություններով:
- 2.15. Բանկը պատասխանատվություն չի կրում.
- 2.15.1. Հաճախորդի կրած այն ծախսերի, կորուստների և վնասների համար, որոնք առաջացել են Հաճախորդի հաշվին բավարար միջոց չլինելու պատճառով Հաճախորդի հանձնարարականը չկատարելու արդյունքում,
- 2.15.2. Հաճախորդի կրած այն ծախսերի, կորուստների և վնասների համար, որոնք առաջացել են Հաճախորդի կողմից տրված սխալ, երկիմաստ և ոչ հստակ հանձնարարականի կատարման արդյունքում,
- 2.15.3. Հաճախորդի կողմից համապատասխան հանձնարարականի հիման վրա փոխանցվող գումարի կապակցությամբ՝ շահառուի կամ միջնորդ Բանկի կողմից լրացուցիչ տեղեկատվություն պահանջելու կամ փոխանցումը կասեցնելու, գումարները սառեցնելու կամ դրանք չփոխանցելու և դրա հետևանքով առաջացած Հաճախորդի ծախսերի, կորուստների և վնասների համար:
- 2.16. Հաճախորդը կարող է չեղարկել Բանկին տրված վճարման հանձնարարականը համաձայն Սակագների: Եթե փոխանցված միջոցներն արդեն վճարված են շահառուին, ապա Բանկը պատասխանատվություն չի կրում գումարների վերադարձման համար:
- 2.17. Բանկն իրավունք ունի առանց Հաճախորդի կարգադրության, Հաճախորդի՝ Բանկում ունեցած հաշիվներից, այդ թվում՝ արտարժույթային հաշիվներից առաջնահերթ՝ Բանկի կողմից սահմանված հերթականությամբ գանձել Հաճախորդի՝ Բանկի նկատմամբ ունեցած պարտավորության գումարները, ներառյալ՝ Սակագներով նախատեսված միջնորդավճարները, ինչպես նաև Հաճախորդի հանձնարարականների կատարման հետ կապված՝ Բանկի կրած ծախսերի գումարները:
- 2.18. Բանկը կարող է առանց Հաճախորդի կարգադրության ելքագրել Հաճախորդի բանկային հաշվում եղած միջոցները՝ Հաճախորդի կնքած պայմանագրերի կամ դատարանի վճռի հիման վրա, ինչպես նաև օրենքով և/կամ Պայմաններով սահմանված դեպքերում:
- 2.19. Բանկը կարող է առանց Հաճախորդի կարգադրության ելքագրել Բանկի կողմից Հաճախորդի հաշվին մուտքագրված միջոցները, եթե այդ մուտքագրումը ծրագրային, մարդկային կամ այլ բնույթի սխալի արդյունք է:
- 2.20. Բանկն իրավունք ունի, առանց Հաճախորդին նախապես ծանուցելու, Հաճախորդի՝ Բանկում ունեցած հաշիվներից դուրս գրել բոլոր հարկերը, եթե նման պահանջ սահմանված է ՀՀ օրենսդրությամբ:
- 2.21. Սակագներով սահմանված լինելու դեպքում Հաճախորդի՝ Բանկում ունեցած հաշիվների մնացորդների դիմաց հաշվեգրվում են տոկոսներ: Հաշվարկված տոկոսագումարները վճարվում են ՀՀ դրամով կամ բանկային հաշվի արժույթով՝ ըստ հաճախորդի ցանկության: Արտարժույթով հաշիվների մնացորդների դիմաց տոկոսագումարը ՀՀ դրամով ստանալու հաճախորդի ցանկության դեպքում տոկոսագումարի փոխարկումը ՀՀ դրամի կատարվում է վճարման օրվա դրությամբ արտարժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով:
- 2.22. Ոսկով առարկայագուրկ մետաղական հաշվում հաշվառվում է Հաճախորդի անկանխիկ (ոչ նյութական) ոսկին, որի համար նշվում է միայն ոսկու հարգը և կշիռը, և չեն նշվում այլ անհատական տվյալները: Նման հաշիվը

բացվում է միայն 999.9 հարգով և հաշվում հաշվառվող անկանխիկ ոսկու հաշվառումն իրականացվում է հաշվեկշռային արժեքով՝ ՀՀ դրամով՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված ոսկու հաշվարկային փոխարժեքով, և կշռային արտահայտությամբ՝ արտահայտված գրամներով՝ 0.01 գրամ ճշտությամբ:

- 2.23. Ոսկով առարկայագուրկ մետաղական հաշվի սպասարկումը ներառում է հետևյալ գործառնությունները՝
 - 2.23.1. հաշվին անկանխիկ (ոչ նյութական ձևով) ոսկու մուտքագրում՝ Բանկի կողմից սահմանված գնանշման համաձայն Բանկից ոսկի գնելով կամ Հաճախորդի այլ կամ երրորդ անձանց առարկայագուրկ մետաղական հաշվից անկանխիկ փոխանցման միջոցով,
 - 2.23.2. հաշվից անկանխիկ (ոչ նյութական ձևով) ոսկու ելքագրում՝ Բանկի կողմից սահմանված գնանշման համաձայն Բանկին ոսկի վաճառելով կամ Հաճախորդի այլ կամ երրորդ անձանց առարկայագուրկ մետաղական հաշվին անկանխիկ փոխանցման միջոցով,
 - 2.23.3. ոսկու անկանխիկ առք և վաճառք Հաճախորդի՝ գործարքի էական պայմանները (զինը, կատարման ժամկետը և կշիռը) պարունակող հայտի հիման վրա,
 - 2.23.4. անակցեպտ գանձումներ Բանկի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ երրորդ անձանց նկատմամբ Հաճախորդի պարտավորությունների կատարման համար:
- 2.24. Ոսկով առարկայագուրկ մետաղական հաշվի սպասարկմամբ Բանկը չի իրականացնում ոսկու նկատմամբ սեփականության իրավունքի գրանցում կամ ոսկու պահառություն:
- 2.25. Հաճախորդի բանկային հաշիվների համար Բանկը տրամադրում է քաղվածք՝ ՀՀ օրենսդրությամբ և/կամ Հաճախորդի հետ համաձայնեցված պարբերականությամբ և եղանակով: Քաղվածք կարող է չտրամադրվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:
- 2.26. Բանկը պարտավոր է հնգօրյա ժամկետում Հաճախորդի պահանջով վերջինիս տրամադրել Բանկային հաշվի քաղվածք՝ գանձելով Սակագներով՝ քաղվածքի տրամադրման համար սահմանված վճարը:
- 2.27. Քաղվածքը համարվում է Հաճախորդի կողմից ընդունված, եթե քաղվածքի ամսաթվից 30 (երեսուն) օրվա ընթացքում Հաճախորդը Բանկին չի ներկայացնում առարկություններ քաղվածքի վերաբերյալ: Սահմանված ժամանակահատվածի ընթացքում կամ դրանից հետո Հաճախորդի կողմից Բանկին գրավոր ձևով ներկայացված առարկությունները լուծվում են ՀՀ օրենսդրությամբ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

3. Հեռահար եղանակով սպասարկում

- 3.1. Բանկը Հաճախորդին տրամադրում է/ հասանելի է դարձնում համապատասխան հեռահար սպասարկման համակարգը՝ Բանկի սահմանած ձևանմուշով Հաճախորդի Բանկ ներկայացրած հայտի (հայտ-պայմանագրի) հիման վրա: Պայմանների իմաստով հեռահար սպասարկման համակարգ են համարվում հեռախոս-բանկ, ինտերնետ/մոբայլ բանկինգ, բանկ-հաճախորդ ծառայությունները:
- 3.2. Բանկի կողմից հրապարակայնորեն հասանելի դարձրած Պայմաններով չնախատեսած այլ հեռահար ծառայությունների պայմանները Բանկի կողմից սահմանվում և հրապարակվում են առանձին՝ այդ ծառայությունների համար նախատեսված միջավայրում, և նման ծառայությունների պայմանների ակցեպտավորումը Հաճախորդի կողմից կատարվում է այդ ծառայություններից օգտվելու գործողությամբ կամ համապատասխան համակարգում նախատեսված եղանակով այդ պայմանների ընդունմամբ:
- 3.3. Հեռահար սպասարկման համակարգի տրամադրման, դրանցում իրականացվող բանկային ծառայությունների և գործառնություններ դիմաց Հաճախորդից գանձվում է վճար համաձայն Սակագների:

- 3.4. Հեռահար սպասարկման յուրաքանչյուր համակարգի համար Բանկը կարող է սահմանել գործառնությունների գումարային, քանակային և այլ սահմանափակումներ:
- 3.5. Հեռահար սպասարկման համակարգով սպասարկման համար Հաճախորդը պետք է ունենա անհրաժեշտ տեխնիկական և ծրագրային ապահովում, որոնք կախված հեռահար սպասարկման համակարգից՝ կարող են տրամադրվել Բանկի կողմից: Հեռահար սպասարկման համակարգի օգտագործման համար անհրաժեշտ համակարգչային և հեռահաղորդակցության սարքավորումների, ինտերնետային կապի ձեռքբերման և վճարման պատասխանատվությունն ու ծախսերը կրում է Հաճախորդը:
- 3.6. Հեռահար սպասարկման համակարգերից յուրաքանչյուրի համար Բանկի կողմից սահմանվում է Հաճախորդի նույնականացման և հավաստագրման կարգ և միջոց: Բանկն իրավունք ունի ցանցացած ժամանակ փոխել, խստացնել կամ մեղմացնել Հաճախորդի նույնականացման կարգը, փոխարինել կամ հետ պահանջել այդ նպատակով Հաճախորդին տրամադրված նույնականացման և հավաստագրման միջոցները:
- 3.7. Հաճախորդը պարտավոր է ապահովել հեռահար սպասարկման համակարգի ծրագրային ապահովման միջոցների, Հաճախորդի նույնականացման և հավաստագրման միջոցների անվտանգ պահպանումը, չտրամադրել և հայտնի չդարձնել դրանք երրորդ անձանց: Նշված միջոցների կորստի, երրորդ անձանց հայտնի դառնալու հետևանքով Հաճախորդի, Բանկի և/կամ երրորդ անձանց կրած վնասների և կորուստների համար պատասխանատվությունը կրում է Հաճախորդը:
- 3.8. Հաճախորդը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Բանկին ծրագրային ապահովման միջոցների, Հաճախորդի նույնականացման և հավաստագրման միջոցների կորստի, երրորդ անձանց հայտնի դառնալու կամ նման վտանգի առկայության դեպքերի մասին:
- 3.9. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն կասեցնել հեռահար սպասարկման համակարգի օգտագործման հնարավորությունը Հաճախորդի համար, եթե ունի կասկածներ հեռահար սպասարկման համակարգի անօրինական օգտագործման, անվտանգության պահանջների խախտման, զեղծարարության վտանգի առկայության վերաբերյալ:
- 3.10. Հեռահար սպասարկման համակարգով Հաճախորդին սպասարկման ժամերը սահմանվում են Բանկի կողմից և հրապարակվում են համապատասխան համակարգում կամ Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:
- 3.11. Հաճախորդի կողմից հեռահար սպասարկման համակարգով Բանկ ներկայացված հանձնարարականը/հայտը Բանկի կողմից կատարվում է տվյալ հեռահար սպասարկման համակարգի համար Բանկի կողմից սահմանված կարգով Հաճախորդին նույնականացնելուց հետո:
- 3.12. Հաճախորդը պատասխանատու է հեռահար սպասարկման համակարգի միջոցով իր կողմից Բանկ ներկայացված հանձնարարականի/հայտի, տեղեկատվության և այլ փաստաթղթերի ճշտության և պատշաճ լինելու համար:
- 3.13. Հաճախորդի կողմից հեռահար սպասարկման համակարգով Բանկ ներկայացված հանձնարարականը/հայտը Բանկի կողմից կարող է մերժվել կամ չկատարվել.
- 3.13.1. եթե Հաճախորդը չի նույնականացվում պատշաճ կարգով, կամ Բանկն ունի կասկածներ Հաճախորդի նույնականացման կամ հեռահար սպասարկման համակարգի անօրինական օգտագործման հետ կապված,
- 3.13.2. եթե հանձնարարականի տեղեկատվությունն ու վավերապայմանները ամբողջական չեն կամ չեն համապատասխանում Բանկի կողմից սահմանված պահանջներին,
- 3.13.3. Պայմաններով, Սակագներով կամ Առանձին ծառայության պայմաններով սահմանված այլ դեպքերում:

3.14. Հեռախոս-բանկ ծառայության միջոցով սպասարկում

- 3.14.1. Հեռախոս-բանկ ծառայությունը հեռախոսակապի միջոցով հեռահար սպասարկման համակարգ է: Բանկը Հաճախորդին տրամադրում է հեռախոս-բանկ ծառայության՝ Բանկի և Հաճախորդի միջև համաձայնեցված տեսակները:
- 3.14.2. Հեռախոս-բանկի գաղտնաբառի կիրառմամբ՝ Հաճախորդի՝ Բանկին տրված բանավոր հաստատումը համարվում է հիմք Պայմաններով սահմանված կարգով Հաճախորդին սպասարկելու համար:
- 3.14.3. Հաճախորդը պատասխատու է իր կողմից հեռախոս-բանկի գաղտնաբառի կիրառմամբ Բանկ ներկայացված հայտի կատարման և դրա հետ կապված հնարավոր կորուստների և վնասների համար:
- 3.14.4. Բանկը Հաճախորդին տրամադրում է Հեռախոս-բանկ ծառայության գաղտնաբառը՝ Հաճախորդի կողմից նշված հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելու միջոցով: Գաղտնաբառը կարող է փոփոխվել Հաճախորդի՝ Բանկ ներկայացված գրավոր հայտի հիման վրա՝ Հաճախորդի կողմից նշված հեռախոսահամարին նոր հաղորդագրության ուղարկման միջոցով: Գաղտնաբառը համարվում է գաղտնի տեղեկատվություն, այդ թվում՝ Բանկի աշխատակիցների համար:
- 3.14.5. Հաճախորդն իրավունք չունի Հեռախոս-բանկ ծառայության գաղտնաբառը տրամադրել կամ հայտնի դարձնել երրորդ անձանց և պարտավոր է անհապաղ հայտնել Բանկին գաղտնաբառի՝ այլ անձանց հայտնի դառնալու և (կամ) կորստի մասին: Բանկը պատասխանատվություն չի կրում որևէ կորստի, վնասի համար, որն առաջացել է գաղտնաբառը Հաճախորդի կողմից հեռախոսակապի միջոցով Բանկին հայտնելու հիմքով Հաճախորդին ծառայություններ մատուցելու արդյունքում, անկախ նրանից, թե Բանկը տեղյակ է կորստի կամ վնասի հնարավորության մասին, թե՛ ոչ:
- 3.14.6. Հեռախոս-բանկ ծառայության միջոցով սպասարկվելու համար Հաճախորդը Բանկի հետ կապ է հաստատում Բանկի (+374 10) 56 11 11 հեռախոսահամարով:
- 3.14.7. Հեռախոս-բանկ ծառայության միջոցով Հաճախորդի սպասարկման ժամանակ լրացուցիչ հաստատում ստանալու նպատակով Բանկը իրավունք ունի հետադարձ կապ հաստատել Հաճախորդի հետ վերջինիս՝ Բանկում գրանցված հեռախոսահամարներից որևէ մեկով, կամ պահանջել Հաճախորդից զանգը կատարել վերջինիս Բանկում գրանցված հեռախոսահամարից:
- 3.14.8. Հաճախորդի՝ Բանկ ներկայացված համապատասխան գրավոր հայտի հիման վրա՝ Բանկը արգելափակում է հեռախոս-բանկ ծառայությունը, ինչպես նաև հանում է արգելափակումը:
- 3.14.9. Հաճախորդը պարտավոր է Հեռախոս-բանկ ծառայության միջոցով արտարժույթի առքուվաճառքի գործարքի մեծության (ծավալի) և փոխարժեքի համաձայնեցման պահից նույն աշխատանքային օրվա ընթացքում կատարել համապատասխան գործարքը:
- 3.14.10. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն հրաժարվել արտարժույթի փոխանակման գործարքը Հաճախորդի հետ նախապես համաձայնեցված պայմաններով կատարելուց, եթե Հաճախորդը չի կատարում գործարքը նույն աշխատանքային օրվա ընթացքում կամ խախտում է Հեռախոս-բանկ ծառայության միջոցով համաձայնեցված գործարքի պայմաններից (գործարքի մեծություն (ծավալ) և փոխարժեք) որևէ մեկը:
- 3.14.11. Բանկն իրավունք ունի գանձել տույժ Հաճախորդի հաշիվներից արտարժույթի փոխանակման գործարքի մեծության (ծավալի) 2 (երկու) տոկոսի չափով, եթե Հաճախորդը հրաժարվում է կատարել գործարքը նույն աշխատանքային օրվա ընթացքում կամ խախտում է Հեռախոս-բանկ ծառայության միջոցով համաձայնեցված գործարքի պայմաններից (գործարքի մեծություն (ծավալ) և փոխարժեք) որևէ մեկը: Վճարման ենթակա գումարը գանձվում է Հաճախորդի այն հաշվից, որով ձևավորվել է գանձման ենթակա պարտավորության գումարը, իսկ եթե այդ հաշվին բավարար գումար առկա չէ, ապա գանձումը

կատարվում է Հաճախորդի՝ Բանկում ունեցած այլ հաշիվներից՝ արտարժույթի փոխարկումը կատարելով տվյալ պահին Բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

3.15. Ինտերնետ/ մոբայլ բանկինգ ծառայության միջոցով սպասարկում

- 3.15.1. Ինտերնետ/մոբայլ-բանկինգ ծառայությունը ինտերնետային զննարկիչի (բրաուզերի) կամ բջջային հավելվածի միջոցով աշխատող հեռահար սպասարկման համակարգ է (այսուհետ Համակարգ), որի միջոցով կարող են իրականացվել Համակարգում հասանելի բանկային ծառայությունները և գործառնությունները՝ Սակագներով, Պայմաններով, Առանձին ծառայության պայմաններով, ինչպես նաև Համակարգում սահմանված սահմանաչափերով և կարգով:
- 3.15.2. Բանկը իրավասու է առանց Հաճախորդին նախապես ծանուցելու որոշակի բանկային ծառայությունների և գործառնությունների համար սահմանել սահմանափակումներ և/կամ սահմանաչափեր, ներառյալ՝ գործառնությունների կատարման մերժում, որոնց մասին հնարավորության դեպքում Բանկը տեղադրում է տեղեկատվություն Համակարգում:
- 3.15.3. Համակարգում առկա բանկային ծառայությունների և գործառնությունների որոշ տեսակներ կարող են հասանելի չլինել Համակարգը բջջային հավելվածի կամ ինտերնետային զննարկիչի միջոցով օգտագործելու դեպքում:
- 3.15.4. Համակարգից օգտվելու համար Բանկը Հաճախորդին տրամադրում է Համակարգ մուտք գործելու նույնականացման և հավաստագրման միջոցներ:
- 3.15.5. Հաճախորդը պատասխանատվություն է կրում Համակարգի շահագործման հետ կապված տեխնիկական, գործառնական և այլ հնարավոր ռիսկերի համար, ինչպես նաև Համակարգ մուտք գործելու նույնականացման և հավաստագրման միջոցների գաղտնի պահպանության համար:
- 3.15.6. Հաճախորդը պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցները՝ Բանկի կողմից տրամադրված՝ մեկանգամյա օգտագործման գաղտնաբառ գեներացնող սարքը, Համակարգի բջջային հավելվածը պահպանելու և երրորդ անձանց հասանելի չդարձնելու ուղղությամբ:
- 3.15.7. Հաճախորդը պարտավոր է Համակարգ մուտք գործելու նույնականացման և հավաստագրման միջոցների, Համակարգի օգտագործման տեխնիկական միջոցների, բջջային հավելվածի կորստի կամ այն երրորդ անձանց հասանելի լինելու մասին իմանալու դեպքում այդ մասին անհապաղ հայտնել Բանկին:
- 3.15.8. Հաճախորդը Բանկի կողմից հաստատված հայտի ձևը լրացնելու միջոցով սահմանում է Համակարգից օգտվելու համար օգտագործող(ներ) (այսուհետ՝ Օգտագործող)՝ Համակարգ մուտք գործելու համար պայմանական անուն(ներ)ով: Հաճախորդը իր համար կարող է սահմանել մեկից ավել Օգտագործող:
- 3.15.9. Հաճախորդը համապատասխան հայտում Օգտագործողի համար սահմանում է Համակարգից օգտվելու իրավասությունների շրջանակ:
- 3.15.10. Օգտագործող(ներ)ի կողմից Համակարգում կատարված բոլոր գործարքների և դրանցից բխող բոլոր հնարավոր վնասների և կորուստների համար պատասխանատու է Հաճախորդը:
- 3.15.11. Համակարգում Հաճախորդը հանձնարարականները ստորագրում (վավերացնում) է էլեկտրոնային եղանակով՝ մեկանգամյա օգտագործման գաղտնաբառ մուտքագրելու միջոցով, որը համարժեք է Հաճախորդի ինքնագիր ստորագրությանը և անհրաժեշտ և բավարար պայման է Բանկի համար Հաճախորդի հանձնարարականը պատշաճ վավերացված համարելու համար՝ առաջացնելով Պայմաններով սահմանված իրավունքները և պարտավորությունները:
- 3.15.12. Համակարգում Հաճախորդի հանձնարարականը էլեկտրոնային ստորագրելու (վավերացնելու) համար կիրառվող մեկանգամյա օգտագործման գաղտնաբառը Հաճախորդը գեներացնում է Բանկի կողմից վերջինիս տրամադրված մեկանգամյա օգտագործման գաղտնաբառ գեներացնող սարքի կամ բջջային

հավելվածի միջոցով, որը Հաճախորդը կարող է ներբեռնել և ակտիվացնել Բանկի կողմից տրամադրված համապատասխան գաղտնաբանալու միջոցով:

3.15.13. Հաճախորդը իր հանձնարարականի կատարման կարգավիճակի մասին տեղեկանում է Համակարգում հանձնարարականի կարգավիճակի փոփոխության միջոցով:

3.15.14. Օգտագործողի կողմից Համակարգով Բանկ ուղարկված հանձնարարականն ընթացքի մեջ գտնվելը դեռևս չի նշանակում, որ այն միանշանակ կատարվել է կամ կկատարվի Բանկի կողմից: Հանձնարարականը համարվում է կատարված միայն այն պահից, երբ Օգտագործողը ստանում է հանձնարարականի կատարման վերաբերյալ հաստատումը՝ Համակարգում Բանկի կողմից հանձնարարականի կարգավիճակը փոխվելու միջոցով:

3.15.15. Հաճախորդին նոր մեկանգամյա օգտագործման գաղտնաբառ գեներացնող սարք կամ մեկանգամյա օգտագործման գաղտնաբառ գեներացնող բջջային հավելվածի գաղտնաբանալի տրամադրելու, ինչպես նաև մեկանգամյա օգտագործման գաղտնաբառ գեներացնող սարքի կորստի կամ վնասվելու դեպքում այն փոխարինելու համար գանձվում է վճար՝ Սակագներով սահմանված չափով և կարգով:

3.15.16. Օգտագործողը պատասխանատու է Համակարգով Բանկ ուղարկված հանձնարարականի ճշտության և ամբողջականության համար և պետք է ապահովի, որ հանձնարարականն արտահայտի իր իրական վերջնական նպատակը:

3.15.17. Բանկը պատասխանատվություն չի կրում.

3.15.17.1. Պայմաններում սահմանված կանոնների և պահանջների, Համակարգից օգտվելու անվտանգության կանոնների խախտումով կատարված գործարքների, Համակարգ մուտք գործելու նույնականացման և հավաստագրման միջոցների՝ երրորդ անձանց տրամադրման կամ հայտնի դառնալու, այդ միջոցների օգտագործմամբ Բանկին փոխանցված և Բանկի կողմից կատարված հանձնարարականների հետևանքով Հաճախորդի կրած կորուստների կամ վնասների համար, անկախ նրանից, թե Բանկը տեղյակ է նման կորուստի կամ վնասի հնարավորության մասին, թե՛ ոչ:

3.15.17.2. Հաճախորդի հանձնարարականը/հայտը ճիշտ և պատշաճ ձևակերպված չլինելու, Պայմաններով սահմանված այլ դեպքերում հանձնարարականը/հայտը չկատարելու հետևանքով Հաճախորդի կրած վնասների համար:

3.15.18. Բանկն իրավունք ունի Համակարգի օգտագործմանը խոչընդոտող տեխնիկական վթարների կամ Համակարգի ծրագրային ապահովման թարմացման կամ փոխարինման, ինչպես նաև այլ պլանային տեխնիկական աշխատանքների ժամանակ անորոշ ժամկետով միակողմանիորեն և առանց հատուցման դադարեցնել Համակարգով Հաճախորդի սպասարկումը և կասեցնել Համակարգի հասանելիությունը Հաճախորդին: Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում սույն կետում նշված դեպքերում Հաճախորդի կրած վնասների համար:

3.16. Բանկ-հաճախորդ ծառայության միջոցով սպասարկում

3.16.1. Բանկ-հաճախորդ ծառայությունը ծրագրային և տեխնիկական միջոցներով աշխատող հեռահար սպասարկման համակարգ է (այսուհետ՝ Բանկ-հաճախորդ համակարգ), որի միջոցով կարող են իրականացվել դրանում հասանելի բանկային ծառայությունները և գործառնությունները՝ Սակագներով, Պայմաններով, Առանձին ծառայության պայմաններով, ինչպես նաև տվյալ հեռահար սպասարկման համակարգի համար սահմանված սահմանաչափերով և կարգով:

3.16.2. Բանկ-հաճախորդ համակարգը բաղկացած է Բանկի կենտրոնական բաժանորդային կետից և Հաճախորդի բաժանորդային կետերից:

- 3.16.3. Հաճախորդի բաժանորդային կետը բաղկացած է անհատական համակարգչից, որն ունի էլք դեպի Ցանցը, ստանդարտ համակարգից և ծրագրային ապահովման պաշտպանության համակարգից:
- 3.16.4. Բանկ-հաճախորդ համակարգի Հաճախորդին վերաբերվող մասը, որը բաղկացած է Բանկի կողմից տրամադրվող ծրագրային ապահովումից (ներառյալ Սերտիֆիկացման կենտրոնի հավաստագիրը), տեղադրվում է Հաճախորդի անհատական համակարգչում, որը պետք է բավարարի Բանկի կայքում հրապարակվող՝ Բանկ-հաճախորդ համակարգի տեխնիկական միջոցների նկատմամբ պահանջներին, և ապահովում է տեղեկատվության ստացումը և հաշվարկային գործառնությունների կատարումը (քաղվածքների, էլեկտրոնային փաստաթղթերի ստացում Բանկից, վճարային էլեկտրոնային փաստաթղթերի առաքում Հաճախորդին և Բանկի հետ այլ տեղեկատվության փոխանակում): Հաճախորդը պարտավորվում է կիրառել Բանկ-հաճախորդ համակարգի Հաճախորդի մասը միայն սարքին վիճակում գտնվող և վիրուսներից զերծ անհատական համակարգչի վրա:
- 3.16.5. Ծրագրային և տեխնիկական միջոցների տեղադրումից հետո Կոդները ստորագրում են երկկողմանի ակտ Բանկ-հաճախորդ համակարգի տեղադրման, ընդունման-հանձնման մասին:
- 3.16.6. Հաճախորդն իրավունք չունի բազմացնել և երրորդ կողմին փոխանցել Բանկի կողմից տրամադրված ծրագրային ապահովումը:
- 3.16.7. Հաճախորդը Բանկ-հաճախորդ համակարգում աշխատելու համար նշանակում է պատասխանատու աշխատակիցներ՝ Բանկի կողմից հաստատված և Բանկին ներկայացված համապատասխան ձևով:
- 3.16.8. Բանկ-հաճախորդ համակարգում Հաճախորդը հանձնարարականները (էլեկտրոնային փաստաթղթերը) ստորագրում (վավերացնում) է էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ (այսուհետ՝ ԷԹՍ), որը համարժեք է Հաճախորդի ինքնագիր ստորագրությանը և անհրաժեշտ և բավարար պայման է Բանկի համար Հաճախորդի հանձնարարականը պատշաճ վավերացված համարելու համար՝ առաջացնելով Պայմաններով սահմանված իրավունքները և պարտավորությունները:
- 3.16.9. Բանկ-հաճախորդ համակարգում Հաճախորդի հանձնարարականը էլեկտրոնային ստորագրելու (վավերացնելու) համար կիրառվող ԷԹՍ-ն ձևավորվում և ստուգվում է ԷԹՍ բանալիների միջոցով, որոնք բանալիների (գաղտնի և բաց) զույգ են: Գաղտնի բանալին գտնվում է միայն տիրոջ մոտ և օգտագործվում է ԷԹՍ ձևավորման համար, իսկ բաց բանալին ծառայում է ԷԹՍ ստուգման համար և փոխանցվում է ԷԹՍ վավերացված էլեկտրոնային փաստաթղթեր ստացող կողմին: Հայտնի բաց բանալիով հնարավոր չէ վերականգնել նրան համապատասխանող գաղտնի բանալին: Օգտագործողների բաց բանալիների հավաստագրերի ձևավորումը իրականացվում է Բանկի սերտիֆիկացման կենտրոնի կողմից ստեղծվող էլեկտրոնային ֆայլով, որը պարունակում է Սերտիֆիկացման կենտրոնի էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված՝ Հաճախորդի տվյալները և բաց բանալին: Բաց բանալու հավաստագիրը ստեղծվում է Սերտիֆիկացման կենտրոնի կողմից հավաստագրի հայտի հիման վրա, որը ձևավորվում և ուղարկվում է Հաճախորդի կողմից Բանկ: Հավաստագրի հայտը ԷԹՍ բանալիների գեներացման ընթացքում ստեղծված ֆայլ է, որը պարունակում է Հաճախորդի տվյալները և բաց բանալին: Հաճախորդի բաց բանալու հավաստագրերը պահվում են Բանկում:
- 3.16.10. Հաճախորդը պատասխանատվություն է կրում Բանկ-հաճախորդ համակարգի շահագործման հետ կապված տեխնիկական, գործառնական և այլ հնարավոր ռիսկերի համար, ինչպես նաև Բանկ-հաճախորդ համակարգ մուտք գործելու նույնականացման և հավաստագրման միջոցների գաղտնի պահպանության համար: Հաճախորդը լիակատար պատասխանատվություն է կրում և պարտավորվում է անխափան վիճակում պահել, չհրապարակել և չտարածել բանալիները:

- 3.16.11. Կողմերը պարտավորվում են գաղտնի պահել Բանկ-հաճախորդ համակարգի ԷԹՄ գաղտնի բանալիները և բաց բանալու հավաստագրի ուժը կորցնելու դեպքում վերստեղծել դրանք: Հետագայում բանալիների պլանավորած փոփոխումը պետք է իրականացվի ոչ պակաս քան տարին մեկ անգամ, ինչպես նաև Կողմերից մեկի կողմից բանալիների վարկաբեկման դեպքում:
- 3.16.12. Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ վերստեղծել իր ԷԹՄ գաղտնի բանալիները, ուղարկել Բանկ հավաստագրի հայտը և ստանալ Բանկի սերտիֆիկացման կենտրոնի կողմից հաստատված իր բաց բանալու հավաստագիրը:
- 3.16.13. Բանկը պարտավոր է Հաճախորդի կողմից Բանկ-հաճախորդ համակարգով ուղարկված կամ գրավոր հայտի հիման վրա հաստատել նոր բաց բանալին Սերտիֆիկացման կենտրոնում՝ թողարկելով բաց բանալու հավաստագիր:
- 3.16.14. Բանկն իրավունք ունի վաղաժամկետ չեղյալ համարել Հաճախորդի բաց բանալու հավաստագիրը և պահանջել Հաճախորդից նոր բանալի:
- 3.16.15. Կողմերը պարտավորվում են անհապաղ տեղեկացնել միմյանց ԷԹՄ գաղտնի բանալիների վարկաբեկման, կորստի, գողության, առանց թույլտվության օգտագործման ցանկացած դեպքի մասին, ինչպես նաև մշակման ենթահամակարգի ծրագրային և տեխնիկական, պահպանության, պաշտպանության և տեղեկատվության փոխանցման միջոցների վնասի դեպքում բանալիների արտապլանային փոփոխություններ և Բանկ-հաճախորդ համակարգը գործունակ վիճակում պահելու նպատակով այլ համաձայնեցված գործողություններ իրականացնելու համար: Ընդ որում, Բանկ-հաճախորդ համակարգի աշխատանքը ժամանակավորապես դադարեցվում է մինչև բանալիների արտապլանային փոփոխությունների իրականացումը:
- 3.16.16. Էլեկտրոնային փաստաթուղթը առաջացնում է Պայմաններով սահմանված պարտավորություններ, եթե այն Հաճախորդի կողմից պատշաճ կերպով ձևակերպվում է, վավերացվում միաժամանակ էլեկտրոնային երկու թվային ստորագրություններով, գաղտնագրվում և փոխանցվում Բանկ-հաճախորդ համակարգի միջոցով, իսկ Բանկն այն ստանում է, վերձանում, ստուգում և ընդունում ի կատարում:
- 3.16.17. Բոլոր էլեկտրոնային փաստաթղթերը պետք է ընդգրկեն անհրաժեշտ բանկային ռեկվիզիտներ՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, և Բանկ-հաճախորդ համակարգի բաժանորդը, ում կողմից ստացվում է տվյալ փաստաթուղթը, պետք է ստորագրի և գաղտնագրի այն:
- 3.16.18. Հաճախորդը իր հանձնարարականի կատարման կարգավիճակի մասին տեղեկանում է Բանկ-հաճախորդ համակարգում հանձնարարականի կարգավիճակի փոփոխության միջոցով:
- 3.16.19. Բանկը պատասխանատվություն չի կրում.
- 3.16.19.1. Պայմաններում սահմանված կանոնների և պահանջների, անվտանգության կանոնների խախտումով կատարված գործարքների, երրորդ անձանց հայտնի դարձած գաղտնի բանալիների օգտագործմամբ Բանկին փոխանցված և Բանկի կողմից կատարված հանձնարարականների կատարման հետևանքով Հաճախորդի կրած կորուստների կամ վնասների համար, անկախ նրանից, թե Բանկը տեղյակ է նման կորստի կամ վնասի հնարավորության մասին, թե՛ ոչ:
- 3.16.19.2. Հաճախորդի հանձնարարականը/հայտը ճիշտ և պատշաճ ձևակերպված չլինելու, Պայմաններով սահմանված այլ դեպքերում հանձնարարականը/հայտը չկատարելու հետևանքով Հաճախորդի կրած վնասների համար:

- 3.16.19.3. Հաճախորդի կրած վնասների համար, այն անձանց հրաժարականի և ոչ ժամանակին կատարած գործողությունների հետևանքով, որոնց օգտին Հաճախորդի հանձնարարությամբ կատարվում է հաշվարկային գործառնություն:
- 3.16.20. Կողմերն ընդունում են, որ իրենց կողմից օգտագործվող տեղեկատվության մշակման, պահպանման, պաշտպանության և փոխանցման ենթահամակարգերը բավարար են հուսալի, արդյունավետ և անվտանգ աշխատանք ապահովելու համար:
- 3.16.21. Կողմերն ընդունում են, որ իրենց կողմից օգտագործվող տեղեկատվության պաշտպանության համակարգը, որն ապահովում է տեղեկատվության ամբողջականության և իսկության վերահսկումը, գաղտնագրման և ԷԹՄ կիրառմամբ բավարար է այն անթույլատրելի օգտագործումից պաշտպանելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթղթերի հեղինակի իսկությունն ու նույնականությունը հաստատելու համար:
- 3.16.22. Բանկ-հաճախորդ ծառայության դադարեցումից տեղեկատվության պաշտպանության գաղտնաբառերի ու բանալիների չհրապարակումը ուժի մեջ է մտնում մեկ օրացուցային տարվա ընթացքում:
- 3.16.23. Բանկն իրավունք ունի Բանկ-հաճախորդ համակարգի օգտագործմանը խոչընդոտող տեխնիկական վթարների կամ Բանկ-հաճախորդ համակարգի ծրագրային ապահովման թարմացման կամ փոխարինման, ինչպես նաև այլ պլանային տեխնիկական աշխատանքների ժամանակ անորոշ ժամկետով միակողմանիորեն և առանց հատուցման դադարեցնել Բանկ-հաճախորդ համակարգով Հաճախորդի սպասարկումը և կասեցնել Բանկ-հաճախորդ համակարգի հասանելիությունը Հաճախորդին: Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում սույն կետում նշված դեպքերում Հաճախորդի կրած վնասների համար:
- 3.16.24. Բանկը Հաճախորդից գանձում է Բանկ-հաճախորդ ծառայության վճարը՝ համաձայն Սակագների:
- 3.16.25. Բանկ-հաճախորդ ծառայության դիմաց 1 ամսից ավել չվճարված պարտքի առկայության դեպքում Բանկն իրավունք ունի դադարեցնել Բանկ-հաճախորդ ծառայությունը, մինչև պարտքի ամբողջական մարումը:
- 3.16.26. Բանկ-հաճախորդ ծառայության դադարեցման դեպքում Հաճախորդը պարտավոր է վճարում կատարել այն ամսվա համար, որի ընթացքում ծառայությունը դադարեցվել է: